ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Վարդուհի Թովմասյան, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջեների կատարման հաշետվությունների վարչության վերլուծության և ոչ ֆինանսական հաշվետվությունների բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2024 թվականի նոյեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 29-ը:

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Պետական ֆինանսների կառավարում և վարչարարական բարեփոխումներ» («Public Financial Management and Administrative Reforms») թեմայով դասընթացի նպատակն էր ուսումնասիրել և քննարկել բարեփոխումների հիմքում ընկած պատճառները, դրա կարևոր տարրերը, իրականացված բարեփոխումների արդյունքները, վերջիններիս վերաբերյալ գնահատականները: Ինչպես նաև փոխանակել բարեփոխումների իրականացման փորձը, հիմնական մարտահրավերները և հաջողության գործոնները:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Վարչարարական բարեփոխումների պատճառները, միտումները, ընթացիկ նախագծերը, հիմնական խնդիրներն ու հաջողության գործոնները,

2) Պետական ֆինանսների կառավարման էությունն ու գլխավոր նպատակները

- Հարկաբյուջետային կարգապահություն
- Ռեսուրսների արդյունավետ բաշխում
- Տեխնիկական արդյունավետություն

- Միջազգային քաղաքականություններին վերաբերող քննարկումներ (Ավստրիայի օրինակով).
- Ներկառավարական հարկաբյուջետային հարաբերություններ (այդ թվում՝ հարկեր և բյուջետային համակարգումը Ավստրիայում)

3) Ավստրիայի միջկառավարական հարկաբյուջետային հարաբերությունները, հարկերի բաշխումն ու բյուջեի համակարգումը
4) Հարկաբյուջետային կառավարումը Ավստրիայում և խորհրդարանի դերը բյուջետային գործընթացում
5) Էլեկտրոնային կառավարում, կանխատեսող վերլուծություն, արհեստական բանականության գործիքներ
6) Ավստրիայի ֆինանսների նախարարության «Կանխատեսող Վերլուծության Իրավասությունների կենտրոն»-ի գործունեություն

- Կանխատեսող վերլուծություն՝ մաթեմատիկական մոդելների և մեթոդների մշակում և կիրառում
- Հարկային վերլուծություն՝ հարկային հատուկ առաջադրանքներ և նախագծեր
- Ընդլայնված վերլուծություն՝ տվյալների վերլուծություն և վիզուալիզացիա
- Մաքսային վերլուծություն

7) Երկարաժամկետ տնտեսական և բյուջետային մարտահրավերներ,
8) Բյուջետային կառավարում և բյուջետային բարեփոխումներ.
9) Կանաչ բյուջետավորման «Green Budgeting» մեթոդաբանություն, հետագա նախաձեռնություններ, միջոցառումներ և մարտահրավերներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Մեկշաբաթյա դասընթացի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Ավստրիայի ֆինանսների նախարարության, Ավստրիայի խորհրդարանի բյուջետային գրասենյակի, Ավստրիայի տեղեկատվական գործակալության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Վիեննայի միացյալ ինստիտուտի մասնագետների հետ: Դասընթացի ժամանակ հանդիպումները և ելույթներն իրականացվել են գործնական աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով (Ավստրիայի օրինակով), որոնց ընթացքում քննարկվել և պարզաբանվել են պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների ընթացքում առաջացող խնդիրները, դրանց լուծման ուղիներն ու հաջող իրականացման գործոնները:

Գործնական աշխատանքի ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց երկրներում իրականացված և ներկայումս կատարման փուլում գտնվող բարեփոխումները:

Դասընթացը բավականին արդյունավետ էր: Հետաքրքիր էր ծանոթանալ այլ երկրներում տեղի ունեցող բարեփոխումների գործընթացներին: Դասընթացը հնարավորություն տվեց ձեռք բերել նոր գիտելիքներ, որոնք կկիրառվեն աշխատանքային գործունեության ընթացքում:

Բոլոր դասախոսություններն իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Կազմակերպվել են գործնական խմբակային աշխատանքներ կոնկրետ թեմաների շուրջ և մասնակիցների կողմից կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծանոթանալով տարբեր երկրներում պետական ֆինանսների կառավարման բնագավառում իրականացվող բարեփոխումներին՝ ստացված գիտելիքները օգտակար և կիրառելի կլինեն Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում կիրառելու նպատակով:

Ստորագրություն **04.12.2024թ.**